ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 23 » հունիս 2025թ, No 3754 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N 3650-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության N 01/2941-25 առ 20.06.2025թ. գրությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 17-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի պետական գրանցման մասին» N 3650-Ա հրամանի հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 1-ին և 4-րդ տողերի 5-րդ սյունակի «500մգ; (30/3x10/) բլիստերում, (30/2x15/) բլիստերում, (50/5x10/) բլիստերում, (60/4x15/) բլիստերում, (60/3x20/) բլիստերում, (100/5x20/) բլիստերում» բառերը փոխարինել «500մգ; (30/3x10/) բլիստերում, (30/2x15/) բլիստերում, (60/4x15/) բլիստերում, (60/3x20/) բլիստերում» բառերով,

2) 2-րդ և 5-րդ տողերի 5-րդ սյունակի «850մգ; (30/2x15/) բլիստերում, (60/3x10/) բլիստերում, (60/4x15/) բլիստերում, (100/5x20/) բլիստերում» բառերը փոխարինել «850մգ; (30/2x15/) բլիստերում, (60/3x10/) բլիստերում, (60/4x15/) բլիստերում» բառերով,

3) 3-րդ և 6-րդ տողերի 5-րդ սյունակի «1000մգ; (30/2x15/) բլիստերում, (30/3x10/) բլիստերում, (45/3x15/) բլիստերում, (50/5x10/) բլիստերում, (60/6x10/) բլիստերում, (60/4x15/) բլիստերում, (120/12x10/) բլիստերում» բառերը փոխարինել «1000մգ; (30/2x15/) բլիստերում, (30/3x10/) բլիստերում, (60/6x10/) բլիստերում, (60/4x15/) բլիստերում» բառերով:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝ սույն հրամանն ընդունվելու պահից

տեղեկացնել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

3. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա.Բաղրյանին՝

1) սույն հրամանը ստանալուց հետո ապահովել լրամշակման կատարումը գրանցամատյանում, առողջապահության նախարարության հաստատված կարգով, նշելով փոփոխության տիպը և ընդունման ամսաթիվը.

2) սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում ապահովել նշված դեղերի վերաձևակերպված հավաստագրերի տրամադրումը հայտատուներին:

Recoverable Signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ